ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԻՊ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ք. Երևան**

**«24» դեկտեմբերի 2020թ.**

| | |
|---|---|
| **Համակարգող խորհրդի նախագահի տեղակալ՝** | ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ տիկին Քրիստիննե Գրիգորյան |

**Համակարգող խորհրդի նիստի մասնակիցներ/անդամներ՝**

| | |
|---|---|
| Տաթևիկ Ստեփանյան | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ |
| Կարեն Բրուտյան | ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Վաչե Տերտերյան | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ |
| Վլադիմիր Հովհաննիսյան | ՀՔԾ պետի տեղակալ |
| Գևորգ Բաղդասարյան | ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ |
| Արսեն Այվազյան | ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ |
| Արտյոմ Սեդրակյան | ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար |
| Մարիա Կարապետյան | ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Իմ քայլը» խմբակցություն |
| Հրանտ Թորոսյան | Ոստիկանության շտաբի կազմակերպական-վերլուծական վարչության պետի տեղակալ- բարեփոխումների և կառավարչական որոշումների |

| | |
|---|---|
| | համակարգման բաժնի պետ, փոխգնդապետ |
| Սյուզաննա Սողոմոնյան | ՀՀ ՊՆ Մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի գլխավոր մասնագետ |
| Լիլիթ Ավետիսյան | Առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ |
| Գոհար Երիմյան | Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ դեկան |
| Սիրանույշ Մելիքյան | ՀՀ Անվտանգության խորհրդի գրասենյակի Ժողովրդավարական ինստիտուտների բաժնի ավագ մասնագետ |
| Սեդա Մելքումյան | Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի գրասենյակի հետազոտությունների և զարգացման վարչության գլխավոր մասնագետ |
| Թագուհի Հարությունյան | ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչության պետ |
| Անդրանիկ Իսրայելյան | ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչության արտաքին կապերի բաժնի պետ |
| Աննա Կարապետյան | ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչության արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ |
| Իզաբելլա Սարգսյան | Եվրասիա համակգործակցության հիմնադրամ |
| Աննա Հովհաննիսյան | Կանանց ռեսուրսային կենտրոն |
| Տաթևիկ Խաչատրյան | Բաց հասարակության հիմնադրամնե |
| Մարիամ Անտոնյան | Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ |

| | |
|---|---|
| Էդգար Խաչատրյան | Խաղաղության երկխոսություն |
| Վիոլետտա Զոփունյան | Իրավունքի զարգացման կենտրոն |
| Նինա Հակոբյան | Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների |
| Կարեն Զադոյան | Իրավաբանների հայկական ասոցիացիա |
| Սյուզաննա Սողոմոնյան | Իրավաբանների հայկական ասոցիացիա |

Համակարգող խորհրդի նիստը մեկնարկել է ՀՀ արդարադատության նախարարի, Համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի բացման խոսքով: Իր խոսքում նախարարի տեղակալը ողջունել է 2020թ. մարտի 2-ի N 282-Ա ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված անհատական կազմով սահմանված Խորհրդի անդամներին, ինչպես նաև առաջին անգամ Խորհրդի կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Տիկին Գրիգորյանն անդրադարձել է Խորհրդի գործունեությանը, ՄԻՊ ռազմավարությամբ և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագրով (այսուհետ՝ միասին ռազմավարական փաստաթղթեր) նախատեսված միջոցառումների կատարման ընթացքին, COVID-19-ով ու Արցախյան պատերազմով պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերներին և դրանց հաղթահարմանը: Տիկին Գրիգորյանը ներկայացրել է նաև նիստի օրակարգը, այն է.

1. 2020թ. առաջին կիսամյակում մասամբ կատարված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում;
2. 2020թ. երկրորդ կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում;
3. Հարց ու պատասխան;
4. Գործողությունների ծրագրում ներառված միջոցառումների հնարավոր վերանայման առաջարկների քննարկում՝ պայմանավորված արտակարգ և ռազմական դրությունների հետևանքներով ստեղծված մարտահրավերներով:

Օրակարգի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը և ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ Աննա Կարապետյանը ներկայացրել են 2020թ. առաջին կիսամյակում մասամբ կատարված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար Արտյոմ Սեդրակյանը հանդես է եկել խոսքով, որի շրջանակներում անդրադարձել է միջոցառումների կատարման վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևաչափին՝ ընդգծելով հաշվետվություններում պարբերաբար կատարման ենթակա միջոցառումների՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացված գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն ներառելու կարևորությունը, մատնանշել է միջոցառումների կատարման կարգավիճակի փոփոխության համար հիմք ծառայող չափանիշներն առանձնացնելու անհրաժեշտությունը՝ մասնավորապես այն միջոցառումների համար, որոնք նախատեսում են 1-ից ավել գործողությունների իրականացում: Պարոն Սեդրակյանը նաև ընդգծել է միջոցառումների համար պատասխանատու և համակատարող մարմինների միջև սերտ համագործակցության կարևորությունը:

Անդրադառնալով պարոն Սեդրակյանի կողմից ներկայացված հարցադրումներին՝ տիկին Գրիգորյանը նշել է, որ Արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ որպես ՄԻՊ ԳԾ-ի իրականացումը համակարգող գերատեսչություն, 2020թ. առաջին կիսամյակի հաշվետվությունում ներառել է պարբերաբար կատարման ենթակա գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որը զետեղված է նաև www.e-rights.am կայքէջում, ինչպես նաև ներկայացրել է Խորհրդի անդամներին: Ինչ վերաբերում է գործողությունների կատարման կարգավիճակին՝ Նախարարի տեղակալը մատնանշել է Նախարարության դիրքորոշումն առ այն, որ միջոցառումների կատարման կարգավիճակը փոխվում է

չկատարվածից՝ մասամբ կատարված այն դեպքերում, երբ իրականացվում է միջոցառման կատարմանն ուղղված նվազագույնը մեկ գործողություն: Տիկին Գրիգորյանը համաձայնել է պարոն Սեդրակյանի կողմից մատնանշված պատասխանատու և համակատարող գերատեսչությունների միջև սերտ փոխգործակցության անհրաժեշտության հետ:

Հաջորդիվ, օրակարգի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ արդարադատության, առողջապահության, պաշտպանության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, ՀՀ ոստիկանության ներկայացուցիչները ներկայացրել են 2020թ. 2-րդ կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ուշադրություն հրավիրելով նաև արտակարգ ու ռազմական դրություններով պայմանավորված որոշ միջոցառումների կատարման անհնարինության վրա:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանը անդրադարձել է ԳԾ-ի 4-րդ կետով սահմանված ՀՈ-ում և ՔԿՀ-ներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչների սահմանմանը՝ նշելով, որ չնայած այն հանգամանքին, որ միջոցառման կատարման վերջնաժամկետ է նախատեսվել 2022թ. I կիսամյակը, Գլխավոր դատախազության կողմից արդեն իսկ մշակվել են չափորոշիչները և շուտով դրանք կընդունվեն:

Այնուհետ տիկին Գրիգորյանը հարթակը տրամադրել է Խորհրդի մյուս անդամներին՝ հարց ու պատասխանի համար:

**Խաղաղության երկխոսություն** ՀԿ-ի ներկայացուցիչ Էդգար Խաչատրյանը հանդես է եկել խոսքով, որով նկատառումներ է ներկայացրել ռազմավարական փաստաթղթերի ու դրանց իրականացման վերաբերյալ, այն է՝ ելակետային տվյալների բացակայությունը որոշ միջոցառումների համար, պետական մարմինների կողմից վերապատրաստումների վերաբերյալ ներկայացված տվյալների անհամապատասխանությունը, Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների ու ԳԾ-ով նախատեսվող դասընթացների փոխկապակցելիության անհրաժեշտությունը: Պարոն Խաչատրյանը նշել է նաև, որ

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից մշակվել է ՄԻՊ ԳԾ-ի իրականացման վերաբերյալ մոնիթորինգային զեկույց, որի արդյունքները կհրապարակվեն մոտ ժամանակներում: Այս համատեքստում, ՀԿ-ի ներկայացուցիչը շնորհակալություն է հայտնել պետական մարմիններին սերտ համագործակցության, հայցվող տեղեկատվությունը պատշաճ ու ժամանակին ներկայացնելու համար:

Անդրադառնալով պարոն Խաչատրյանի խոսքին՝ տիկին Գրիգորյանը նշել է, որ ԳԾ-ով նախատեսվել են մշակման փուլում առկա ելակետային տվյալները, իսկ ԳԾ-ի իրականացման արդյունքում արդեն կամբողջացվեն նոր ելակետային տվյալներ, որոնք հիմք կհանդիսանան հաջորդ ծրագրերի համար: Նախարարի տեղակալը նշել է նաև, որ Արդարադատության նախարարությունը սերտորեն համագործակցել է Արդարադատության ակադեմիայի հետ ԳԾ-ի մշակման փուլում և համապատասխան դասընթացները փոխկապակցված են:

Հաջորդիվ խոսքով է հանդես եկել **Եվրասիա համագործակցության հիմնադրամի** ներկայացուցիչ Իզաբելլա Սարգսյանը, ով ողջունել է Խորհրդի ձևաչափը՝ դիտարկելով այն որպես արդյունավետ հարթակ կառավարություն-ՔՀԿ համագործակցության տեսանկյունից: Տիկին Սարգսյանն անդրադարձել է ԳԾ-ով նախատեսված հաշվետվության ձևաչափին՝ նշելով անմիջական ազդեցության գնահատման կարևորությունը և պատրաստակամություն հայտնել աջակցելու նախարարությանը սույն ձևաչափի զարգացման հարցում: Տիկին Սարգսյանը հետաքրքրվել է նաև իրավահավասարության ապահովման մասին օրենքի նախագծի զարգացումներով, ինչին ի պատասխան տիկին Գրիգորյանը նշել է, որ նախագիծն այժմ լրամշակվում է՝ հիմքում ունենալով նաև ԵՄ փորձագիտական կարծիքը ատելության խոսքի օրենսդրական կարգավորումների մասով, որը նախատեսվում է նաև արտացոլել նախագծում:

**Կանանց ռեսուրսային կենտրոն** ՀԿ-ի ներկայացուցիչ Աննա Հովհաննիսյանը ևս ողջունել է սույն ձևաչափով հանդիպումների անցկացումը և անդրադարձել կանանց իրավունքների և ընտանիքում բռնության կանխարգելմանն առնչվող որոշ հիմնախնդիրներին՝ կարևորելով ԳԾ-ով նախատեսված միջոցառումների

իրականացման անմիջական արդյունքները թիրախային խմբի իրավունքների ապահովման տեսանկյունից, ինչպես նաև անդրադարձել իրավապահ համակարգի հետ սերտ համագործակցության կարևորությանը:

**Իրավաբանների հայկական ասոցիացիայի** ներկայացուցիչ Սյուզաննա Սողոմոնյանն իր խոսքում ներկայացրել է ԳԾ-ի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների վերաբերյալ ասոցիացիայի կողմից մշակված մոնիթորինգային զեկույցը, ինչպես նաև անդրադարձել որոշ հիմնախնդիրների կապված ԳԾ-ով նախատեսված միջոցառումների անմիջական ազդեցության (output level and impact level indicator) գնահատման չափորոշիչներին, իրազեկմանն ուղղված միջոցառումներին, դրանց շրջանակներում թիրախային լսարանի ծավալին և այլ համակարգային բարեփոխումներին:

**Բաց հասարակության հիմնադրամների** ներկայացուցիչ Տաթևիկ Խաչատրյանն իր խոսքում ողջունել է Խորհրդի գործունեության կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավումը և առաջարկել ստեղծել Խորհրդի անդամների առավել պրակտիկ համագործակցությանն ուղղված ինտերակտիվ շփման հարթակ: Տիկին Խաչատրյանն առանձնացրել է ԳԾ-ի իրականացման հաշվետվությունների ներկայացման արդյունավետության բարձրացման, կատարված միջոցառումների իրական ազդեցության գնահատման անհրաժեշտությունը, ինչպես նաև կարևորել պետական բյուջեից ծրագրի ֆինանսավորման ապահովումը: Իր խոսքում տիկին Խաչատրյանն անդադարձել է նաև երկրի առջև ծառացած խնդիրներով պայմանավորված նոր առաջնահերթությունների հաշվառմամբ ԳԾ-ում փոփոխությունների իրականացմանը:

Ամփոփելով հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները՝ Խորհրդի նախագահի տեղակալ տիկին Գրիգորյանը խնդրել է հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ ներկայացնել հաշվետվությունների ներկայացման ձևաչափի փոփոխության վերաբերյալ առաջարկություններ, որոնք կքննարկվեն ռազմավարական փաստաթղթերի փոփոխությունների շրջանակներում:

Անցնելով օրակարգի 3-րդ կետին տիկին Գրիգորյանը ներկայացրել է COVID-19-ով և պատերազմով պայմանավորված Նախարարության կողմից ԳԾ-ում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտության հիմնավորումները, ինչպես նաև նշել, որ Նախարարությունը Խորհրդի նիստին ընդառաջ որոշ պետական մարմիններից գրավոր կերպով ստացել է փոփոխության որոշ առաջարկություններ, որոնք կամփոփվեն բոլոր շահագրգիռ մարմինների առաջարկությունները ստանալուն պես՝ հնարավորինս սեղմ ժամկետներում:

Տիկին Գրիգորյանն անդրադարձել է նաև ռազմավարական փաստաթղթերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից Նախարարությանը փոխանցված առաջարկությունների փաթեթին, որը նախապես տրամադրվել էր Խորհրդի անդամներին: Իրավաբանների հայկական ասոցիացիայի ներկայացուցիչ Կարեն Զադոյանը մանրամասներ է ներկայացրել առաջարկությունների փաթեթի վերաբերյալ, որով փոփոխություններ են նախատեսվում ինչպես Ռազմավարությունում, այնպես էլ ԳԾ-ում՝ որպես գերակայություն առանձնացնելով 3 սուբյեկտային խմբեր՝ Արցախյան 2020 թվականի պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներ, Արցախյան 2020 թվականի պատերազմի հետևանքով Հայաստանի Հանրապետություն արտագաղթած փախստականները (տեղահանվածները), Արցախյան 2020 թվականի պատերազմի հետևանքով զինված ուժերի գերեվարված ծառայողները և խաղաղ բնակիչները քաղաքացիները: Փաթեթով ներկայացվել են նաև ԳԾ-ում կոնկրետ միջոցառումներ նախատեսելու վերաբերյալ առաջարկություններ:

Անդրադառնալով առաջարկվող փոփոխություններին՝ ՀՀ ԱՍՀՆ նախարարի առաջին տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը տեղեկացրել է, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի ու Առողջապահության նախարարությունները սերտ համագործակցում են բարձրացված խնդիրներին արագ լուծում տալու նպատակով: ՀՀ ԱՍՀՆ-ն պարզեցրել է սույն սուբյեկտային խմբի անձանց համար աջակցության տրամադրման գործընթացը, կատարվել են օրենսդրական փոփոխություններ բժշկասոցիալական փորձաքննության(ԲՍՓ) իրականացման կարգում, գրեթե վերացվել

են երկարաժամկետ գործընթացները կապված Կենտրոնական ռազմաբաժշկական հանձնաժողովի հետ: ԲՍԳ բոլոր խմբերը կատարում են տնային այցեր և չկա անձ, հատկապես զինծառայող, ով կարիք ունի փորձաքննություն, սակայն այդ փորձաքննությունը ինչ-ինչ պատճառով չի իրականացվում: Տիկին Ստեփանյանը տեղեկացրել է նաև բեկորային վնասվածք ստացած զինծառայողների պարագայում փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ 3-ամսյա ժամանակահատվածի առկայության մասին: Նախարարի առաջին տեղակալը նշել է, որ Առողջապահության նախարարությունից օրական կտրվածքով ստացվում է անհրաժեշտ տեղեկատվությունը, 9000 վիրավորներ հաշվառված են և ստանում են անհրաժեշտ աջակցությունը: Նախարարի առաջին տեղակալը տեղեկացրել է նաև ԱՍՀՆ-ի կողմից այս համատեքստում նպաստների տրամադրման կարգում համապատասխան փոփոխությունների կատարման նախաձեռնության մասին՝ ուղղված անձանց զբաղվածության ապահովմանն ու սոցիալ-տնտեսական կայունացմանը: ԱՍՀՆ-ն ներկայացրել է նաև օրենսդրական փոփոխությունների նախագիծ ուղղված պարոն Զադոյանի կողմից մատնանշված սուբյեկտային խմբերին տրամադրվող աջակցությանը, որն ի թիվս այլնի ներառում է գործատուներին տրամադրվող աջակցության տեսակները: Տիկին Ստեփանյանը հայտնել է նաև որ ԱՍՀՆ-ի կողմից արդեն իսկ մշակվել ու շրջանառվել է «Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով, ի թիվս այլնի, նախատեսվում է ստեղծել աջակցության կենտրոններ Երևանում և մարզերում ուղղված զբաղվածության ապահովմանն ու սոցիալական ներառմանը: Տիկին Ստեփանյանը նաև պատրաստակամություն է հայտնել՝ քննարկելու այս ոլորտում իրականացվող գործողությունների վերաբերյալ առաջարկությունները:

Այնուհետ խոսքով է հանդես եկել **Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի** ներկայացուցիչ Մարիամ Անտոնյանը, ով ընդգծել է ռազմավարական փաստաթղթերում համապատասխան փոփոխությունների

անհրաժեշտությունը, մասնավորապես՝ առաջարկել է ընթացք տալ 2011թ. անհայտ կորած անձանց մասին օրենքի նախագծին, ինչպես նաև, ի թիվս այլնի, նախատեսել միջոցառում՝ ուղղված արտակարգ և ռազմական դրությունների ընթացքում խոսքի ազատության սահմանափակումների իրավաչափության ուսումնասիրությանը:

Նիստի ավարտին տիկին Գրիգորյանը շնորհակալություն է հայտնել մասնակիցներին արդյունավետ քննարկման և փոխգործակցության համար, ինչպես նաև խնդրել մինչև 2021թ. հունվարի առաջին տասնօրյակը Արդարադատության նախարարություն գրավոր կերպով ներկայացնել Ռազմավարական փաստաթղթերում համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները՝ հնարավորինս սեղմ ժամկետում դրանք քննարկելու և կյանքի կոչելու համար:

**Համակարգող խորհրդի նախագահի տեղակալ՝**

**Քրիստիննե Գրիգորյան**

**30.12.2020թ.**